

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015

Կորպորատիվ կառավարման հայտարարագիր- Նկարագրական մաս

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

ՀԱՍՑԵ. ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ. www.artsakhhek.am

1.ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնակարգի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

- Բաժնետերերի ընդհանուր ժողով
- Տնօրենների խորհուրդ
- Գլխավոր տնօրեն
- Վերստուգող հանձնաժողով
- Կորպորատիվ քարտուղար

Ընկերության նշանակալի բաժնետերերն են.

- ✓ ԼՂՀ Կառավարություն տիրապետում է 5 100 000 հատ բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 47.9%-ը,
- ✓ Ուղուլյան Ժոզեֆ տիրապետում է 1 262 901 հատ բաժնետոմս , որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 11.86%-ը,
- ✓ «Մուլտիկոնտինենտալ դիստրիբյուշն» ՍՊԸ տիրապետում է 1 193 692 հատ բաժնետոմս, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 11.2%-ը,

2.ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում գումարվել է Տարեկան ընդհանուր ժողով՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 26 հասցեում:

2. Տարեկան ընդհանուր ժողովը անցկացվել է 02.06.14թ.-ին:

3.ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը, համաձայն «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի մասին կանոնակարգի», ԲԸԺ-ի մասին ծանուցվել են փոստով՝ տպագրված ծանուցմամբ, մինչև 28.04.14թ., այն է ԲԸԺ-ից առնվազն 15 օր առաջ(հեռակա ժողովների դեպքում՝ 30 օր առաջ): Օրակարգը և համապատասխան փաստաթղթերն ուղարկվել են ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, հասանելի են դարձել Ընկերության ինտերնետային կայքում և Գլխավոր գրասենյակում:

Օրակարգի և ԲԸԺ-ին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանվում է Ընկերության կանոնադրությամբ (հասանելի է Ընկերության ինտերնետային կայքում՝ http://artsakhhek.am/?page_id=389):

4. Բաժնետերերը հնարավորություն են ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով՝ համաձայն գործող օրենսդրության պահանջների:

5. Բաժնետերերը Ընկերության «Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին» կանոնակարգի 28-րդ հոդվածով սահմանված կարգով քվեարկել են կոմույաստիվ քվեարկությամբ:

6. Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, քվեարկության արդյունքները և արձանագրությունը հասանելի են Ընկերության ինտերնետային կայքում՝ <http://artsakhhek.am/wp-content/uploads/2018/07/voroshum2018.pdf>

3.ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի գործառույթները

Կանոնակարգի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 12.1-12.17 կետերը սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները, որոնք հասանելի են Ընկերության ինտերնետային կայքում՝ http://artsakhhek.am/?page_id=389:

Խորհրդի կազմը

02.06.14թ. դրությամբ Ընկերության Խորհուրդը բաղկացած է 7 անդամից, որոնցից 5 ոչ գործադիր են և 0 անկախ անդամ:

Համաձայն Կանոնագրքի 10-րդ հոդվածի «Անկախ» է համարվում խորհրդի այն անդամը, ով.

- ✓ վերջին 3 տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ ընկերությունում, բացառությամբ որպես խորհրդի անդամ պաշտոնավարելուց,
- ✓ վերջին 3 տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձանցից ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես խորհրդի անդամ ստացած վարձատրությունից,
- ✓ վերջին 3 տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, խորհրդի անդամ, գործադիր մարմնի ղեկավար կամ հաշվապահ, չի ունեցել նյութական բնույթի որևէ գործարար հարաբերություն, այդ թվում՝ վարկ կամ փոխառություն ստանալու և տրամադրելու հետ կապված, ընկերության կամ ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ,

- ✓ վերջին 5 տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության գործող կամ նախկին արտաքին աուդիտն իրականացնող անձի, նրա հետ փոխկապակցված ընկերությունների բաժնետեր կամ աշխատող,
- ✓ վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Հնկերության խորհրդի անդամ և չի հանդիսանում վերոհիշյալ անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ,
- ✓ չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր կամ նրա ներկայացուցիչ ցուցակված ընկերությունների դեպքում (նշանակալից է համարվում իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը):

ԽՈՐՀՈՒՐ				
Պաշտոնը և անունը	Գործադիր ¹	Ոչ գործադիր ²	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած՝
1.Նախագահ՝ Սպարտակ Թևոսյան	-	Ոչ գործադիր	-	2010թ.
2.Անդամ՝ Վահրամ Բեգլարյան	Գործադիր	-	-	2009թ.
3. Անդամ՝ Հայկ Բեգլարյան	-	Ոչ գործադիր	-	2011թ.
4. Անդամ՝ Րաֆֆի Բալոզյան	-	Ոչ գործադիր	-	2012թ.
5. Անդամ՝ Կարեն Արաբյան	Գործադիր	-	-	2012թ.
6.Անդամ՝ Հայկ Բոյաջյան	-	Ոչ գործադիր	-	2013թ.
7.Անդամ՝ Արա Ղուկյան	-	Ոչ գործադիր	-	2013թ.

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները՝ ներառյալ Խորհրդի անկախ անդամների վերաբերյալ տվյալները, տարվա ընթացքում Խորհրդի անդամների պաշտոնաթողության և պաշտոնանկության, նրանց գործառույթների, ինչպես նաև Խորհրդի հանձնաժողովներին անդամության վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ստորև:

¹ Խորհրդի գործադիր անդամը Հնկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձն է:

² Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Հնկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

Խորհրդի Նախագահ՝ Սպարտակ Թևոյան

Ծննդյան տարեթիվ	1949թ.
Քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետություն
Կրթություն	Բարձրագույն
Մասնագիտություն/ հիմնական որակավորում	Տնտեսագետ
Հիմնական պաշտոն	ԱՀ ֆինանսների նախարար
Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը	-
Նշանակման տարի	2010թ.
Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ	1 տարի
Աշխատանքային փորձառություն	36 տարի
Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ	-
Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը	ԱՀ ֆինանսների նախարար
Անդամությունը Հնկերության կամ այլ Հնկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին	-
Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները	Ընդհանուր հսկողություն/կառավարում
Աշխատանքը այլ Հնկերություններում/ Խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	-

Խորհրդի անդամ՝ Վահրամ Բեգլարյան

Ծննդյան տարեթիվ	1976թ.
Քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետություն
Կրթություն	Բարձրագույն
Մասնագիտություն/ հիմնական որակավորում	Ֆինանսիստ
Հիմնական պաշտոն	«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն
Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը	-
Նշանակման տարի	2009թ.
Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ	1 տարի
Աշխատանքային փորձառություն	19 տարի
Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ	-
Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը	«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն
Բանկում փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը	-
Անդամությունը Բանկի կամ այլ ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին	-
Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները	<ol style="list-style-type: none"> 1. Վարչության գործունեության ընդհանուր հսկողություն 2. Ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/ռիսկերի/ընդհանուր հսկողություն 3. Ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման ընդհանուր հսկողություն 4. Ընկերության անձնակազմի կառավարման արդյունավետության ընդհանուր հսկողություն 5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն 6. Հաշվապահական հաշվառման և հաշվապահության քաղաքականության նկատմամբ ընդհանուր հսկողություն 7. Ընկերության ռազմավարության ընդհանուր հսկողություն

Աշխատանքը այլ ընկերություններում/ Խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	-
--	---

Խորհրդի անդամ՝ Րաֆֆի Բալոզյան

Ծննդյան տարեթիվ	1983թ.
Քաղաքացիություն	Ֆրանսիական Հանրապետություն
Կրթություն	Բարձրագույն
Մասնագիտություն/ հիմնական որակավորում	Ֆինանսիստ, մարքեթոլոգ
Հիմնական պաշտոն	«Ֆրանկ Սյուլեր» ընկերության ներդրումների գծով խորհրդատու
Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը	-
Նշանակման տարի	2012թ.
Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ	1 տարի
Աշխատանքային փորձառություն	8 տարի
Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ	-
Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը	«Ֆրանկ Սյուլեր» ընկերության ներդրումների գծով խորհրդատու
Բանկում փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը	-
Անդամությունը ընկերության կամ այլ ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին	-

<p>Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները</p>	<p>1.Վարչության գործունեության ընդհանուր հսկողություն</p> <p>2.Ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/ռիսկերի/ընդհանուր հսկողություն</p> <p>3.Ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման ընդհանուր հսկողություն</p> <p>4.Ընկերության անձնակազմի կառավարման արդյունավետության ընդհանուր հսկողություն</p> <p>5.ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն</p> <p>6.Հաշվապահական հաշվառման և հաշվապահության քաղաքականության նկատմամբ ընդհանուր հսկողություն</p> <p>7.Ընկերության ռազմավարության ընդհանուր հսկողություն</p>
<p>Աշխատանքը այլ Ընկերություններում/ Խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ</p>	<p>-</p>

Խորհրդի անդամ՝ Կարեն Արաբյան

<p>Ծննդյան տարեթիվ</p>	<p>1977թ.</p>
<p>Քաղաքացիություն</p>	<p>Հայաստանի Հանրապետություն</p>
<p>Կրթություն</p>	<p>Բարձրագույն</p>
<p>Մասնագիտություն/ հիմնական որակավորում</p>	<p>-</p>
<p>Հիմնական պաշտոն</p>	<p>«Ամբեր Կապիտալ» ՓԲԸ տնօրեն</p>
<p>Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը</p>	<p>-</p>
<p>Նշանակման տարի</p>	<p>2012թ.</p>
<p>Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ</p>	<p>1 տարի</p>
<p>Աշխատանքային փորձառություն</p>	<p>11 տարի</p>
<p>Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ</p>	<p>-</p>

Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը	«Ամբեր Կապիտալ» ՓԲԸ տնօրեն
Բանկում փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը	-
Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին	-
Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները	<ol style="list-style-type: none"> 1. Վարչության գործունեության ընդհանուր հսկողություն 2. Ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/ռիսկերի/ընդհանուր հսկողություն 3. Ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման ընդհանուր հսկողություն 4. Ընկերության անձնակազմի կառավարման արդյունավետության ընդհանուր հսկողություն 5. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն 6. Հաշվապահական հաշվառման և հաշվապահության քաղաքականության նկատմամբ ընդհանուր հսկողություն 7. Ընկերության ռազմավարության ընդհանուր հսկողություն
Աշխատանքը այլ Ընկերություններում/ Խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	-

Խորհրդի անդամ՝ Հայկ Բոյաջյան

Ծննդյան տարեթիվ	1979թ.
Քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետություն
Կրթություն	Բարձրագույն
Մասնագիտություն/ հիմնական որակավորում	Տնտեսագետ
Հիմնական պաշտոն	«Արմսվիսթանկ» ՓԲԸ պորտֆելի ավագ կառավարիչ
Խորհրդի անդամի անկախ լինելու	-

հանգամանքը	
Նշանակման տարի	2013թ.
Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ	1 տարի
Աշխատանքային փորձառություն	10 տարի
Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ	-
Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը	«Արմսվիսթանկ» ՓԲԸ պորտֆելի ավագ կառավարիչ
Բանկում փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը	-
Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին	-
Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները	<ol style="list-style-type: none"> 1.Վարչության գործունեության ընդհանուր հսկողություն 2.Ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/ռիսկերի/ընդհանուր հսկողություն 3.Ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման ընդհանուր հսկողություն 4.Ընկերության անձնակազմի կառավարման արդյունավետության ընդհանուր հսկողություն 5.ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն 6.Հաշվապահական հաշվառման և հաշվապահության քաղաքականության նկատմամբ ընդհանուր հսկողություն 7.Ընկերության ռազմավարության ընդհանուր հսկողություն
Աշխատանքը այլ Ընկերություններում/ Խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	-

Խորհրդի անդամ՝ Արա Ղուկաս

Ծննդյան տարեթիվ	1977թ.
Քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետություն
Կրթություն	Բարձրագույն
Մասնագիտություն/ հիմնական որակավորում	Իրավագիտության մագիստրոս, Պետական ծառայողի որակավորում
Հիմնական պաշտոն	«Զանգեզուրի Պղնձամուխիբդենային կոմբինատ» ՓԲԸ Իրավաբանական Պայմանագրային Ծառայության պետ
Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը	-
Նշանակման տարի	2013թ.
Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ	1 տարի
Աշխատանքային փորձառություն	16 տարի
Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ	-
Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը	«Զանգեզուրի Պղնձամուխիբդենային կոմբինատ» ՓԲԸ Իրավաբանական Պայմանագրային Ծառայության պետ
Բանկում փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը	-
Անդամությունը Բանկի կամ այլ ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին	-
Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները	<ol style="list-style-type: none"> 1.Վարչության գործունեության ընդհանուր հսկողություն 2.Ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/ռիսկերի/ընդհանուր հսկողություն 3.Ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման ընդհանուր հսկողություն 4.Ընկերության անձնակազմի կառավարման արդյունավետության ընդհանուր հսկողություն 5.ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն 6.Հաշվապահական հաշվառման և հաշվապահության

	քաղաքականության նկատմամբ ընդհանուր հսկողություն 7.Ընկերության ռազմավարության ընդհանուր հսկողություն
Աշխատանքը այլ Ընկերություններում/ Խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	-

Խորհրդի անդամ՝ Հայկ Բեգլարյան

Ծննդյան տարեթիվ	1980թ.
Քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետություն
Կրթություն	Բարձրագույն
Մասնագիտություն/ հիմնական որակավորում	Տնտեսագետ
Հիմնական պաշտոն	-
Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը	-
Նշանակման տարի	2011թ.
Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ	1 տարի
Աշխատանքային փորձառություն	8 տարի
Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ	-
Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը	-
Բանկում փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը	-
Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին	-

<p>Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները</p>	<p>1.Վարչության գործունեության ընդհանուր հսկողություն</p> <p>2.Ներքին և արտաքին աուդիտի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների/ռիսկերի/ընդհանուր հսկողություն</p> <p>3.Ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման ընդհանուր հսկողություն</p> <p>4.Ընկերության անձնակազմի կառավարման արդյունավետության ընդհանուր հսկողություն</p> <p>5.ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի ընդհանուր հսկողություն</p> <p>6.Հաշվապահական հաշվառման և հաշվապահության քաղաքականության նկատմամբ ընդհանուր հսկողություն</p> <p>7.Ընկերության ռազմավարության ընդհանուր հսկողություն</p>
<p>Աշխատանքը այլ Ընկերություններում/ Խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ</p>	<p>-</p>

Խորհրդի գործունեությունը

2014թ. Ընթացքում Խորհուրդը գումարել է 4 նիստ, որից 4-ը հեռակա քվեարկությամբ: Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը.

Պաշտոն և անուն	Նիստերի մասնակցությունը անձամբ	Նիստերի մասնակցությունը հեռակա կարգով	Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր
1.Նախագահ՝ Սպարտակ Թևոսյան	-	4	4
2.Անդամ՝ Վահրամ Բեգլարյան	-	4	4
3.Անդամ՝ Դաֆֆի Բալոզյան	-	2	4
4.Անդամ՝ Կարեն Արաբյան	-	4	4
5.Անդամ՝ Հայկ Բոյաջյան	-	4	4
6.Անդամ՝ Արա Ղոնայն	-	4	4
7. Անդամ՝ Հայկ Բեգլարյան	-	-	4

5.ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը նպատակահարմար չի գտնում ձևավորել հանձնաժողովներ:

6. ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Վերստուգող հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից: Վերստուգող հանձնաժողովի բոլոր անդամները Խորհրդի անդամ չեն հանդիսանում:

Վերստուգող հանձնաժողովի անդամներն են.

ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ			
Պաշտոն և անուն	Ոչ գործադիր	Անկախ	Հանձնաժողովի անդամ է սկսած՝
1. Նախագահ՝ Արթուր Պետրոսյան	-	-	2010թ.
2. Անդամ՝ Արթուր Պատվականյան	-	-	2008թ.
3. Անդամ՝ Արթուր Ներսիսյան	-	-	2013թ.

Վերստուգող հանձնաժողովի գործառույթները և պարտականությունները սահմանվում են Ընկերության «Վերստուգող հանձնաժողովի մասին» կանոնակարգով, որը հաստատվել է Խորհրդի կողմից:

«Վերստուգող հանձնաժողովի մասին» կանոնակարգը հասանելի է Ընկերության ինտերնետային կայքում՝ http://artsakhhek.am/?page_id=389:

Վերստուգող հանձնաժողովի գործունեությունը

2014թ. ընթացքում Վերստուգող հանձնաժողովը գումարել է 1 նիստ, որից 1 –ը առկա, իսկ 0 հեռակա քվեարկության կարգով:

Մասնակցությունը Վերստուգող հանձնաժողովի նիստերին՝

Պաշտոն և անուն	Նիստերին մասնակցությունը անձամբ	Նիստերին մասնակցությունը հեռակա կարգով	Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր
1. Նախագահ՝ Արթուր Պետրոսյան	1	-	1
2. Անդամ՝ Արթուր Պատվականյան	1	-	1
3. Անդամ՝ Արթուր Ներսիսյան	1	-	1

7. ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հաշվիչ հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներն են՝

ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ			
Պաշտոն և անուն	Ոչ գործադիր	Անկախ	Հանձնաժողովի անդամ է սկսած՝
4. Նախագահ՝ Ժան Հովհաննիսյան	-	-	2012թ.
5. Անդամ՝ Նանար Շախունց	-	-	2012թ.
6. Անդամ՝ Մանյա Պետրոսյան	-	-	2012թ.

Հաշվիչ հանձնաժողովի գործառույթները և պարտականությունները սահմանվում են Ընկերության «Հաշվիչ հանձնաժողովի մասին» կանոնակարգով, որը հաստատվել է Խորհրդի կողմից:

«Հաշվիչ հանձնաժողովի մասին» կանոնակարգը հասանելի է Ընկերության ինտերնետային կայքում՝ http://artsakhhek.am/?page_id=389:

8. ԳՈՐԾԱՊԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է 1(մեկ) գլխավոր տնօրենից: Գործադիր մարմնի անդամների համառոտ կենսագրությունները, ինչպես նաև նրանց գործառույթների և պարտականությունների մանրամասները, բացահայտված են Ընկերության տարեկան հաշվետվությունում, որը հասանելի է ընկերության ինտերնետային կայքում՝ http://artsakhhek.am/?page_id=394:

Վահրամ Բեգլարյան՝ Գլխավոր տնօրեն.

- ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,
- ✓ ներկայացնում է Ընկերությունը ԱՀ-ում և արտասահմանում,
- ✓ գործում է առանց լիազորագրի,
- ✓ տալիս է լիազորագրեր,
- ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,

- ✓ Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
- ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
- ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Արմեն Գասպարյան՝ տեխնիկական տնօրեն.

- ✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում:

Ժան Հովհաննիսյան՝ ֆինանսական տնօրեն.

- ✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում:

Արայիկ Դավթյան՝ գլխավոր հաշվապահ.

- ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը,
- ✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը,
- ✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,
- ✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:

9. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է Դմիտրի Բեցկովը, ով նշանակվել է Խորհրդի որոշմամբ:

Ընկերության կորպորատիվ քարտուղարը իր գործառույթներն իրականացնում է համաձայն Կանոնագրքի 22-րդ հոդվածի և Ընկերության «Կորպորատիվ քարտուղարի մասին» կանոնակարգի, որը հասանելի է ընկերության ինտերնետային կայքում՝ http://artsakhhek.am/?page_id=389:

10. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ - Ընկերության արտաքին աուդիտն իրականացվում է մրցույթով:

Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձ է նշանակվել «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն, որն արտաքին աուդիտն իրականացնող անձի պարտականություններն իրականացնում է 2012թ.-ից:

Արտաքին աուդիտն իրականացնող անձի և Ընկերության հարաբերությունները կարգավորվում են համաձայն Կանոնագրքի 28-րդ հոդվածի:

11. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովում:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները և տեղադրված է Ընկերության ինտերնետային կայքում՝ <http://artsakhhek.am/wp-content/uploads/2018/04/2017-tarekan.pdf>:

Ստորագրված է՝

Խորհրդի նախագահ _____

Գլխավոր տնօրեն _____

Հավելված 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ- «Հետևիր կամ բացատրիր»

Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց		Այո/Ոչ	Մեկնաբանություններ/ Բացատրություն
Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի(ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները			
1.	Ընկերության կանոնադրությունը և համապատասխան կարգերը նախատեսում են հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	Այո	Կանոնադրություն՝ 17.1-17.3 կետեր
2.	ԲԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 15 օր առաջ:	Այո	ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը, համաձայն «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի մասին կանոնակարգի», ԲԸԺ-ի մասին ծանուցվել են փոստով՝ տպագրված ծանուցմամբ, մինչև 28.04.14թ., այն է ԲԸԺ-ից առնվազն 15 օր առաջ(հեռակա ժողովների դեպքում՝ 30 օր առաջ): Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, հասանելի են դարձել Ընկերության ինտերնետային կայքում և Գլխավոր գրասենյակում:
3.	ԲԸԺ-ի օրակարգն ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտն իրականացնող անձի անունը:	Այո	Օրակարգը և համապատասխան փաստաթղթերն ուղարկվել են ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց, հասանելի են դարձել Ընկերության ինտերնետային կայքում և Գլխավոր գրասենյակում:
4.	Ընկերության գործող կարգերը, որոնց վերաբերյալ հղում է կատարված կանոնադրությունում, սահմանում են հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով՝ քվեաթերթիկների միջոցով:	Այո	

5.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ՝ համաձայն գործող օրենսդրության պահանջների:	Այո	
6.	Արդյոք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով: (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում):	Այո	
7.	Արդյոք բաժնետերերն իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	Այո	
8.	Արդյոք Խորհուրդը ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	Այո	
9.	Արդյոք բաժնետերերն իրավունք ունեն հարցեր տալու ժողովի ժամանակ:	Այո	
10.	Արդյոք խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	Այո	
Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը			
11.	Ընկերությունն ունի շահութաբաժինների վճարման կարգ, որը մշակվել և հաստատվել է Խորհրդի կողմից և հրապարակվել է ինտերնետային կայքում:	Այո	Ընկերությունն ունի շահութաբաժինների վճարման կարգ, որը մշակվել և հաստատվել է Խորհրդի կողմից:
12.	Շահութաբաժինների վճարման կարգը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը(payout ratio):	Ոչ	
Խորհուրդը			
13.	Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված խորհուրդ, որի մասին հրապարակված է Ընկերության ինտերնետային կայքում:	Այո	
14.	Արդյոք խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնադրքի դրույթներին Ընկերության հետևելու	-	

	վերաբերյալ		
15.	Արդյոք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին(այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և ազատում դրա անդամներին:	Այո	
16.	Արդյոք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյոք նրանցից առնվազն երկուսն անկախ են:	Այո	
17.	Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլն)՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերվող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին:	-	
18.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովներն այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	-	
19.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	-	
Խորհրդի անդամների նշանակումը			

20.	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցված է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները:	Այո	
21.	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը և համառոտ կենսագրականները հրապարակվել են Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	Այո	
Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ			
22.	Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը:	-	
23	Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	-	
Խորհրդի նիստերի հաճախելիությունը			
24.	Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և /կամ Ընկերության տարեկան հաշվետվությունում:	Այո	
Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները			
25.	Ինչպես պահնջվում է Կանոնգրքով, տարեկան հաշվետվությունը և /կամ ԿԿ հայտարարագրի նկարագրական մասը մանրամասն տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների մասին:	Այո	

Խորհրդի նիստերի տարեկան պլանը			
26.	Ցուցակված ընկերությունների և ՊԸ-ների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ:	Այո	
27.	Խորհուրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:	Այո	
Խորհրդի նախագահը			
28.	Խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:	Այո	
29.	Ընկերության կանոնադրությամբ հստակ տարանջատված են Խորհրդի նախագահի և գործադիր տնօրենի իրավասությունները:	Այո	
30.	Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամներն իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն Ընկերության և իրենց պարտականությունների մասին:	Այո	
Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից			
31.	Ընկերության կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունը ապահովագրվել է Խորհրդի անդամների գործունեության վնասների ռիսկից:	Ոչ	

Աուդիտի հանձնաժողով			
32	Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով , որտեղ մեծամասնությունը , ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ:	-	
33.	Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:	-	
34	Աուդիտի հանձնաժողովը հետևում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և Ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերվող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություն ներկայացնում դրանց հաստատման վերաբերյալ:	-	
35	Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	-	
36	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու Ընկերության ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերը:	-	
37.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը նրկայացնելու համար:	-	

38.	Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչներ	-	
39.	Աուդիտի հանձնաժողովը, դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքերը ներառվել են տարեկան հաշվետվությունում:	-	
40.	Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները:	-	
Ներքին աուդիտ			
41.	Ներքին աուդիտն իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	-	
42.	Ներքին աուդիտն իրականացնող անձն անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	-	
43.	Ներքին աուդիտն իրականացնող անձն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	-	
44.	Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար:	-	

Արտաքին աուդիտ			
45.	Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ աուդիտորական ծառայությունները:	Այո	
46.	Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը հաստատվել է ԲԸԺ-ում:	Այո	
47.	Ընկերությունն ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:	Այո	
Խորհրդի այլ հանձնաժողովները			
48.	Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ	Ոչ	
49.	Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանվում են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները:	-	
50.	Ընկերության Խորհուրդը պետք է ստեղծի ռիսկերի կառավարման , ռազմավարական պլանավորման և ներդրումային հանձնաժողովներ՝ օժտված համապատասխան իրավասություններով:	-	
51.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	-	
52.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին ներկա գտնվեն բոլոր նիստերին:	-	

Կորպորատիվ քարտուղար			
53.	Ընկերության խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ քարտուղարը աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և Ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը:	Այո	
54.	Կորպորատիվ քարտուղարն աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի օրենսդրության, Կանոնագրքի, Ընկերության կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Ընկերության կողմից կատարելը:	Այո	
Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը			
Տարեկան հաշվետվություն			
55.	Ընկերությունը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	Այո	
56.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն՝ կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազային ստանդարտներին համապատասխան:	Այո	
57.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել Ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում:	Այո	

58.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Շնկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում Շնկերության ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է :	Այո	
59.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին:	Այո	
60.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Շնկերության հետ փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցած գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Շնկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Շնկերության ընդունված քաղաքականությունը և ընթացակարգը: Շնկերության փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Շնկերության գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Շնկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների բացակայության դեպքում պետք է հստակ նշվի այդ մասին:	Այո	
61.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:	Այո	
62.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Շնկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղված կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:	Ոչ	Շնկերության նշանակալից բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը տեղակայված է Շնկերության ինտերնետային կայքում:
63.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Շնկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Շնկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը:	Այո	

64.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունը, այդ թվում տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալներ:</p>	Ոչ	
65.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները:</p>	Ոչ	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի անունը և աուդիտորական եզրակացությունը:
66.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր Ընկերության, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերությունների հետ:</p>	Ոչ	
67.	<p>Տարեկան հաշվետվությունը ներառում է Տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, Ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացքում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացտրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները:</p>	Այո	

68.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	Ոչ	
69.	Տարեկան հաշվետվությունը ներառվում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը:	Այո	
Ընկերության ինտերնետային կայքը			
70.	Ընկերությունն ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:	Այո	
71.	Ընկերության ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը:	Այո	
72.	Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	-	
73.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ:	Այո	
74.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագիրը:	Այո	
75.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Այո	
76.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը	Ոչ	

77.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԾ-երի նիստերի արձանագրությունները:	Այո	
78.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:	Այո	
79.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության կառուցվածքը և բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը:	Այո	Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը տեղակայված է ինտերնետային կայքում:
80.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունը:	Այո	
Վարքագծի կանոններ			
81.	Ընկերությունը ընդունել է վարքագծի կանոններ:	-	
82.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց հետ հրաբերությունների, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին:	-	
83.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահագանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին:	-	
84.	Ընկերությունը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոնների հետևելու մոնիթորինգի համար:	-	
Կանոնադրական կապիտալի ավելացումը			

85	Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին:	Այո	
Շահառուներ			
86.	Խորհուրդը սահմանել է այն շահառուների շրջանակը, որոնք համապատասխանում են Ընկերության գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն Ընկերությունից:	-	
87.	Ընկերությունը ընդունել է քաղաքականություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	Այո	
88.	Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը:	-	
89.	Շահառուների համար հասանելի են Ընկերության ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվությունների և կորպորատիվ կառավարմանը վերաբերող բաժինները:	Այո	